

առնել ի նոցանէ զանտառս զուարճացեալ ծառոց։
 Զի որ արար զջուրսն եւ կոշեաց զժողովան նոցունց՝
 ծովս, սոյն իսկ արար զաւազանս ջրոց առ ի
 տնկազարդութիւն անտառաց։ Գերերանեանն
 ամենայնի՝ Աստուածային հանդիսավեհութիւն
 արար, ասեմ, օն անդր քան զՍողոմոն զսրբազան
 դրեանսն, իբր անօթս շնորհաց կենդանարար ջրոյ
 Հոգւոյն Սրբոյ, առ ի արտագրել ջրոցն այնոցիկ
 միջնորդութեամբ՝ զանտառս զուարճալեաց ծառոց
 այլաբանական, խորհրդական, բարոյական եւ
 հոգեւորական եւ նկարագրական մեկնութեանց։
 Որ իբր ի դետոյ բաշխումն է Հոգւոյն Սրբոյ,
 յառաջ խաղացեալ աղբիւր իմն տիեզերածաւալ
 եւ յորդաբուղն եւ անտի բաժանեալ ի չորս
 յառաջս քառակերպից մեկնութեանց։ Ե՛լ ասեմ
 յաստուածային դրախտէ փափկութեան աղբիւրս
 այս Աստուածաշունչ տառից եւ չորիւք ընթացիւք
 զտիեզերածաւալ եկեղեցի անտառացոյց զուար-
 ճալի ծառօք։ Ո՛չ ուրեմն թարց բանաւոր պատ-
 ճառի հեղինակ գրքոյս կոշեաց զանունն սորին
 Աստուածային կամ Մեծնոց Աստուածա-
 յին Սուրբ Գրոյ։ յորում դրախտի զվարսաւոր ծառս
 գեղեցիկ մեկնութեանց քառակերպից ի մի տուփ
 համագումարեաց։ Զի թէպէտ միակերպ անուամբ
 յորջորջեաց Անտառ Այլաբանութեան, բայց
 ծննդական երկն իւր ցուցանէ ի սմին եւ զգրականն
 մեկնութեամբ նախագրեալ բառից. զխորհրդականն
 մինչ զմեղըն եւ զմանանայն տայ ապացոյց
 աստուածայնոց քաղցրութեան, զհոգեւորն մինչ
 գերկինս տայ օրինակ եկեղեցւոյ. եւ կամ զգրախտն
 հոգւոյ հաւատացելոց, զբարոյականն մինչ զչորեմին
 գետսն դրախտին յարաբերէ առ չորեմին բարոյական
 առաքինութիւնսն, ըստ մեկնութեան Ֆիլժոնի
 երրայական իմաստասիրի։ Բայց հեղինակ սորին
 չորեքկին մեկնութեանց իբր պարունակող զայ-
 լաբանականն ի կիր առնու, իբր թէ զժողովս